29. ԱՎՃԻ ԱՀՄԱՏԻ ՀԵՔԻԱԹ

Վախտի մեկին մեկ մարդ է էղնում, անունը Ահմատ։ Էս մարդը ավճութունով է ման գալում։

Մեկ օր առնում է իր թվանքն ու էրթում է ավուղուշ։ Էրթում տեսնում է, որ մեկ քարի տակ, մեկ գեշ խոլլըկ սև օձ փաթթվել է մեկ անլման սիրուն ալաշա օձիմ։ Էս բանը որ Ավճի Ահմատը տեսնում է՝ սիրտը ղաբուլ չի անում, ասում է. «Ես էսքան տարի ավճութեն եմ անում, էսենց բան չեմ տեսած, էս գարշելի սև օձը փաթթվի էս սիրուն օձի՞ն, իմ սիրտը ղաբուլ չի անում։ Ես էսոր պիտի սպաննեմ», ասում ու նշան է բռնում, քցում։ Մոնց է էղնում սև օձին չի գիպնում, էն սիրուն օձին է դիպնում, սատկեցնում։ Սև օձը փախնում մտնում է քարի տակ։

— Վա՜յ, ես էս ինչ բան էր արի, ես իսկի յանլիշ բան չէի արած, էս ինչխ էղավ, ես էլ չհասկցա։ Էլ ըստից հետև հարամ էղնի ընձի ավճութենը, էլ պտի չանեմ։

Ձեռներն ու ծնկները թուլանում է, փոռ ու փոշման թողնում դառնում է տուն։

Դու մի ասի, էդ սիրուն օձը, օձերի թագավորի կնիկն է։ Էս բանը հ՚իմանում է օձի թագավորը, կանչում է օձերին, ասում.— Էրկու օձ գնացեք մտեք Ավճի Ահմատի տուն, գիշեր էնոր կրրնկից էնենց խածեք, որ աղուն էնոր գլխից դուրս տա, թե որ չկրցաք ձերը բոշ է։

Էրկու օձ հ՝ելնում գալում են Ավճի Ահմատի էրթկին, թաքնըվում են ինչուի որ մութը կոխե, Ավճի Ահմատը պառկի քնի։

Իրկուն թուփ են էղնում Ահմատի յարաններ, ահպապներ, դըրկիցներ, որ քիչ յարանութեն անեն։ Գալում աշում են, որ ավճի Ահմատ ըսկի քեֆ չունի, ասում են.— Յա՛, Ավճի Ահմատ, դու ամեն օր քեֆով էիր, էսօր յաղո՞ւզ ես էտենց նիաթ միաթդ վրա բերել, չըլնի քեֆ չունիս։

— Չէ՛, ես հիվանդ չեմ, ամա, ի՞նչ ասեմ, վալլա, հիվնդից բեթար եմ։ Էսօր ընձի էնենց մի ղազիա է ձեռ տվել, որ հեչ չեմ կըրնա մոռնա։

Օձերը էդ վախտ գալում են էրթկեն հ՝անկաշ են դնում Ավճի Ահմատի խոսքերին։

Ավճի Ահմատն ասում է.— Ես էսօր գվա թե ավղուշ գնացի, գնացի մեկ զուլումի ռաստ էկա։ Աշեցի, որ մեկ քարի տակ, մեկ մունտառ սև օձ փաթթվեր է մեկ սիրուն խըտուտիկ օձի, որ մարդ աշում է, մարդու խելքն է էրթում։ Էնենց ընձի չաթին էկավ, որ տեսա, սիրտս ղաբուլ չէրավ, ըսի վալլահա էս սև օձին ես պտի սպանեմ, ինչ գալում է գա։ Նշան առա քցեցի, վա՛յ ձեռներ, դուք կոտըրվեք, իմ թվանքս իր տեղը չդիպնի, սև օձին ղիպնելու տեղ, դիպավ էն սիրուն օձին, սպանեց։ Սևը փախավ, մտավ քարի տակ։ Ես էլ թոբբա եմ արել, որ ձեռքս էլ թվանք չ՝պտի առնեմ՝ քանի սաղ եմ։ Էս է, աղբեր, իմ քեֆ չունենալու պատճառը։

Օձերը լավ լսում են Ավճի Ահմատի խոսքերը ու ըստեղից հայտե թողնում էրթում են թագավորի մոտ։ Թոմար լսածներ պատմում են թագավորին։

Էս հեղին օձի թագավոր էրկու բաղշա օձ է ճամբում Ավճի Ահմատի հետևից, որ էրթան առնին գան։

Օձերը գալում Ահմատին ասում են.— Մեր թագավորը քեզի էվատի կանչում է։

Ավճի Ահմատը հ՝ելնում, օձերի հ՝ետև ընկնում, էրթում է։ Օձերը ճամբուն ասում են Ավճի Ահմատին թե.— Մեր թագավորը քեզի պիտի խալըթե, ամա դու բաղշա բան չհ՝ուզես, մենակ կըսես թե. «Թագավոր քու լեզուն քաշե իմ բերան», դու էն վ՝ախտ հ՝իմաստուն կէղնիս։

Էս խոսքերը սորվեցուցին Ավճի Ահմատին։

Որ էրթում հասնում են թագավորի մոտ, թագավորը ասում է Ավճի Ահմատին.— Դու յաղո՞ւզ իմ թագուհուն սպանեցիր։

Էն էլ մեկ-մեկ ասում է թագավորին իր տեսածը։

Թագավոր հարցնում է, թե.— Դու որ էն օձին տեսնես կը ճանչնա՞ս։

— Թագավորը սաղ էղնի, յաղո՞ւզ չեմ ճանչնա, որ տեսնիմ կը ճանչնամ։

Թագավոր ձեն է տալում. ինչքան որ օձեր կան թոփ են էղնում, գալում են Ավճի Ահմատի հ՚առջևեն անցնում են։ Թագավոր թեզ, թեզ հարցնում է.— Ըստոնց մեջ չկա՞։

— Չէ,— կըսե Ահմատը,— ըստոնց մեջ հեչ մեկն էլ չէ, էն օձը ըստի չ՚կա։

Թագավոր կըսե.— Աշեք ուրիշ տեղ օձ մնացեր է։

Օձեր ասում են թե.— Հեչ մի տեղ օձ չէ մնացեր, մինակ ֆլան պառվի տղեն մնացեր է քարի տակ։

Էրթում էնոր էլ բերում են։ Պառվի տղան որ գալում է թե չէ, փախնում մտնում է օձերի տալգեն, որ Ավճի Ահմատը չտեսնի։ Ավճի Ահմատ տեսնում է թե չէ՝ ասում է.— Թագավոր ապրած կենա, էս օձն էր։

Թագավորի հրամանով էնենց թիքա թիքա արեցին, որ կտորներ չէրևաց։ Թագավոր ղառավ Ավճի Ահմատին ըսավ.

— Հ՚ուզե, քու խալաթը տամ։

— Քու սաղութունգ եմ հ՚ուզում, ուրիշ բան չէ։

— Չէ,— կըսե թագավոր,— հ՚ուզե, ինչ որ մտքեդ անցնի կուտամ կը։

— Ուրիշ բան չեմ հ՚ուզում, թագավոր, մինակ քու լեզուն քաշե իմ բերան, էլ ուրիշ բան չեմ հ՚ուզում։

— Հա՚յ, քու սորվեցնողի վիզը կոտրի, որ քեզի սորվեցուց։ Կուտամ, հմա հում կաթնակերին բաղդ չ՚կա, դու սոնդ, համ քու գլուխ, համ էլ իմս տուրը կ՚տաս։

Օձի թագավոր իր լեզուն քաշեց Ավճի Ահմատի բերան։ Ավճի Ահմատ շնորհակալ էղավ ու դուրս հ՚ելավ, որ էրթա իր տուն։ Թագավոր թամբիհ արեց ու ըսավ.— Դու, էլ քու ջանդ մարդու շանց չես տա, քու սրդդ քու կնկան բիլա չես ասեր։

Օձի թագավորը թամբիհ տվեց ու Ավճի Ահմատ գնաց։

Դուրս հ՚ելավ Ավճի Ահմատ տեսավ, որ քարեր խոսում են, ղշեր, խոտեր, գազաններ, թոմրի լեզուն հասկնում է, էնենց մե հ՚իմացտութեն է էկե իր վրեն։

Գալում հասնում է իրանց գեղի մոտ, աշում է, որ շները խոսում են թե.— Էս գիշեր գել կընկնի օչխրի սուրուի մեջ, կուշտ միս կուտենք։

Էրկու պզտիկ զաղար էլ կըսեն.— Մենք չոպնին հ'իմաց կտանք։

Ավճի Ահմատ էս խոսքեր որ լսում է, էրթում օչխրի տիրոջ զարթեցնում է, ասում է թե.— Հ'ելեք, էս գիշեր գել ձեր օչխրներ պտի խեղդե։

Օչխրի տերը ծիծաղում է Ավճի Ահմատի վրեն ու ասում է.— Դու հ'իմաստուն ես, ի՞նչ գիտես որ ասում ես։ Թե որ օղորդ էղավ, քեզի էրկու հատ չաղ օչխար բերելը մեր պարտքը էղնի։

— Լավ,— կըսե Ավճի Ահմատ,— Գացեք, ձեր օչխարը բերեք դեղի մոտիկ, էն էրկու պզտիկ զաղարն էլ տարեք ձեր մոտ, գիլան որ էկան, զաղարներ ձեզի հ'իմաց կուտան։

Գիշեր հլա կես չէր էղած, բիրդան զաղարներ կոխեցուցին, մարդիկ հ'ելան աշեցին, որ դրուատ, գիլան հասբեհաս են սուրուին։ Հ'ետևեն հ'ընկան փախցրին։

Սաբախտան էրկու չաղ օչխար սուրուի միշից ջոկեցին, բերին տվին Ավճի Ահմատին ու ասին.— Ախպեր, դու հ'իմաստուն մարդ ես, էս օչխարները քեզի հալալ էղնի։

Ավճի Ահմատ ինքն էլ հ'ելնում էրթում է սուրուի մեշ, տեսնում է, որ էդ սաղ սուրուի մեջ մեկ գեշ թոխլի կա, որ ասում է.— Ես հազար գլուխ օչխրի ղոշ պտի էղնիմ։

Ավճի Ահմատը բերում օչխարներ հետ է տալում, էն մեկ թոխլին բռնում բերում է, ասում է.— Էս մեկ թոխլին ընձի հերիք է։

Գեղացիք բաշլայեցին խնդալ Ավճի Ահմատի վրա, թե.— Հլա, էստոր խելքին աշեք, էն չաղ օչխարներ թողեց՝ էս մունտառ թոխլուն հավնավ։

Էս բանից հետև Ավճի Ահմատ էնքան հարստացավ, հազար գլուխ օչխար դրստեց։ Սաղ աշխարք զարմանում է Ահմատի վրեն, թե բիրդան էսքան հարստուքեն հ'ո՞ւրտից ձեռք բերեց։

Օր մի դրկցներու կնկտիք թոփ էին էղած Ավճի Ահմատի կնկա մոտ, խոսում էին։ Հարցուցին Ավճի Ահմատի կնկան թե.— Դու քու մարդու սրոը չես հ'իմանում, էդ հ'ո՞ւրտից բիրդան էդենց հարըստցաք։

Ավճի Ահմատի կնիկը կըսե.— Ես բանե բեխաբար եմ, չիտեմ։

— Քու մարդն որ գիշեր քնում է իրա շորեր հանո՞ւմ է, թե չէ,— հարցնում է դրկցի մեկը։

— Չէ՛,— իմ մարդ էս քանի վախտ է, գիշերներ իր շորեր չի հանում։

— Թե որ էդենց է, գնա քու մարդուն հարցու թե՝ քու սրոը ի՞նչ է, էնի քեզի կըսե։

Գալում, Ավճի Ահմատի կնիկ մարդու մոտ նիաթներ կախում նստում է։ Մարդը հարցնում է.— Կնիկ, յաղո՞ւզ ես քու նիաթ-միաթդ կախել, ի՞նչ է էղել։

— Ի՞նչ է էղեր, էլ ի՞նչ պտի էղնի։ Դու մո՞նց մարդ ես, որ քու սրսը քու կնկան չես ասում։ Դու էս քանի վախտ է յաղո՞ւզ գիշերներ քու ջորեր չես հանում պտոկում, հալբաթ էդոր մեջ բանըմ կա։

— Ա՜յ կնիկ, դու յաղո՞ւզ ես հ՚ուզում իմ սրոը իմանալ, ես իմ սրոը որ քեզի ասեմ, ես կը մեռնիմ։

— Չէ, չի էղնի, որ չի էղնի, դու պտի քու սրոդ ընձի ասես, չես ասեր, ես քեզի կնիկ էղնող չեմ։

— Թե որ էդենց է, մարդ ղրկե թող իմ տեղը փորե, ջուր ու սապոն բեր հաղրե, ինչունի որ ես էրթամ օչխրին հանդիպիմ գամ։

Կնիկը մարդ է ճամբում, տեղը փորում հազրում է, ջուրը բերում տաքցնում է, սապոն է բերում հազր է անում, բաքլայում է, որ մարդը գա։

Ավճի Ահմատ դնաց օչխրին տեսնելու։ Ղոչխատուի վախտն էր։ Գնաց տեսավ, որ ղոչը հ՚ընկավ մեկ մաքուի հետևեն։ Մաքին փախավ դեմ առավ յառին, օչխարը իրան յառից ցած քցեց, ղոչը մնաց կեցած յառի բերնին։ Օչխարը ասում է ղոչին.

— Դեհ եկի՞ն ես, հետևես արի է՞։

— Չի՞ համար եմ գալում, ես էլ խո Ավճի Ահմատը չեմ, որ մեկ կնկա համար մեռնիմ, քեզի չեմ առնիմ, տեհա էրթում եմ էն մեկելին եմ առնում։

Ավճի Ահմատ մտածեց. «Օ՜, ես օչխրի չափ էլ խելք չունիմ, հող իմ գլխուս, որ ես իմ սրոը իմ կնկաս ասում եմ, որ մեռնիմ ու ահագին հարստութունից ղրկվիմ»։

Շուտով դառավ էկավ տուն, կնկան ասավ.— Կնիկ տեղս փորել հազրե՞լ ես, ջուր, սապոն հաղր արե՞լ ես, դեհ, գնա՛ կացին էլ բեր իմ մոտ։

Կնիկ էրթում կացին էլ բերում դնում է մարդու մոտ։

Մարդն ասում է.— Կնիկ դու հ՚ուզո՞ւմ ես իմ սրուս իմանաս,— հայտե մե կացին կնկա ճակտին։ Կնիկ հ՚ընկավ գետին ու մեռավ։ Տեղը ղաթի փորած հազիր էր, տաք ջուրն ու սապոն դրած էր։ Կընկան լողացուց, պատանքը կարեց, գնաց դրացոց իմաց տվեց թե.— Վալլահ, չեք ասում, կնիկս սանջու էղավ մեռավ, արեք տանինք թաղենք։

Դրացիք թոփ էղան Ավճի Ահմատի կնկան վերուցին տարան

թաղեցին, էկան տուն, Ավճի Ահմատին մխիթարեցին, դառան գնացին իրանց տները։

Էգ էրկրի թագավորը էնենց գեղ հիվնգցավ, որ էլ մի ասե։ էլ աչխարք դոխտուր, հեքիմ չը մնաց, էլ գիտուն չմնաց թոփ էղան էկան։ Հեչ մեկը թագավորի ցավ չիմացավ։ Գիտուն մարդիկ մեկ բան գտան թագավորին դեղ։ Ասում են.— Թագավորին, թե որ ուտեցնեն օձի թագավորի գլուխ, կը սաղնա։ Էդ էլ վով կարա բերե, ալաչա ջան ունեցողը, ուրիշ օնչով չի կարա։ Էլ ուրիշ դեղ ու ճար չկա։

Ավճի Ահմատ ինչքան որ էրթում էր լողանալու, էնենց խալվաթ տեղ էր էրթում լողնալու, որ օնչով չիմանար ու չը տեսներ։ Մեկ օր էլ էրթում է էլի խալվաթ տեղ, որ լողնա։ Մոնց է էղնում էդ տեղեր էրկու հատ հոտաղ է էղնում։ Ավճի Ահմատ նեսս ու նեն է աչում, մարդ չի տեսնում, շորեր հանում մտնում է ջուր։ Հոտաղներ քիչ մոտենում տեսնում են։

Էն մեկը մեկելին ասում է.— Տո՜, աո՜, աչե, աչե՛, էն մարդու ջանը ինչրխ ալաչա է։

Տղերքը էրթում իրանց հորերուն ասում են, թե.— Մենք հ'էսօր տեսանք Ավճի Ահմատի ջանը, տկլորցավ լողնալու, էնենց ալաչա էր, որ մարդ զարմանում էր։

Թագավորի հիվնդութուն ամեն մարդ լսեր էր։ Հ'իմացեր էին, որ օձի թագավորի գլուխ դեզ են ասել, էն էլ հ'ում ջան որ ալաչա էղնի՝ էն կարա բերե։

— Էս լավ էղավ,— ասում են,— էրթանք թագավորին ասենք, մեզի բոլ օսկի կուտան։

Էդ մարդիկ հ'ելնում էրթում են թագավորի մոտ ու ասում են.— Թագավոր ապրած կենա, ի՞նչ ես տալում մեզի, որ մենք մեկ ալաչա մարդու տեղ ասենք, որ էն մարդն էլ գիտենք, կարա էրթա ջահմարի գլուխ բերե։

— Ձեր կչռնութով օսկի ձեզի կուտամ,— կըսե թագավոր։

— Թագավոր ապրած կենա, Ավճի Ահմատի ջանը ալաչա է, մենք տեսած ենք։

Էն ռոպեին թագավոր մարդ է ճամբում Ավճի Ահմատի հ'ետևեն։ Ավճի Ահմատը գալում է, ամա ճամբին մտածում է. «Էս լավ բան չէ, որ էս հիվանդ թագավոր ընձի կանչում է»։ Էսենց մտածելով գալում թագավորի մոտ, բարևում կանգնում է։

Թագավոր կըսե.— Հանեք էս մարդու շորերը։

Թագավորի ամրն է, էլ ճար չի էղնում, զոռով հանում, աչում են, որ զորդ էգ մարդու ջան ալաչա է։

Թագավորն ասում է.—Կէրթաս օձի թագավորի գլուխը կ'բերես՝ դաթի լավ, քու կշռնոթով մեկ օսկի կուտամ, չե՞ս էրթա՝ գլուխդ կը զարնեմ։

Ավճի Ահմատ տեսավ, որ էլ իլլաճ չկա, ասում է.— Թագավոր ապրած կենա, ընձի մի քանի օր վատա տուր էրթամ բերեմ։

Թագավորը օր է տալում։ Թողնում, նիաթ-միաթ կախած գալում է տուն։ Հ'իմանում է, որ իր ջանի ալաշա էղնելը էրկու հոտաղ են տեսած։

Ավճի Ահմատ հ'ելնում էրթում է օձի թագավորի մոտ։ Թագավորը տեսավ, որ Ավճու նաշիաթը նաշիաթ չէ, ինքն էլ հ'իմաստուն էր, հասկցավ, թե չի հմար էր էկած։ Վերցնում ասում է Ավճի Ահմատին օձի թագավորը.— Ես քեզի չասի, թե հում կաթնակերին բաղդ ու էհդիբար չկա, դու օրմ իմ գլուխ դուս կ'տաս։ Ա՞խ, դու քու ջանդ հ'ո՞ւմ ցույց տվիր։

Ավճի Ահմատը հ'ընկնում է թագավորի հ'ոտներն ու ասում է.— Հ'եռսուն տարի է, որ իմ ջան մարդու ջանց չեմ տվել։ Օրմ գնացի լողնալու, չիտեմ մոնց է էղնում ըդտե էրկու հոտաղ են էղնում, ես չեմ տեսնում, էդ հոտաղներ բիրդան իմ ջանս տեսնում են, էրթում իրանց հորերին ասում են։

— Թե որ էդենց է, էլ ֆայտա չունի, բարի', կռե իմ գլուխս տար, մինակ պոչիս կողմեն էրկու թիզ դանլի կռե քցե, չունքի իմ աղուն պոչիս մեջն է։ Գլուխս կը տանիս դնես ղազանը, լավ կէփես, էնենց որ յոթնեն մեկ մնա։ Հ'ետև կլցնես, գլխից մի ստական դուս կը խմես, մեկել նոր կը տաս թագավորին։ Աշե, ինչրխ որ թամբիհ եմ անում, էնենց էլ կոնես։

Ավճի Ահմատ առնում օձի թագավորի գլուխը բերում է, դնում ղազան, թամբիհ արածի պես էփում է, գլխից մե ստական ինքն է խմում, մեկելը նոր տալում է թագավորին։

Ավճի Ահմատ որ խմում է թե չէ, դառնում է տասնուհինգ տարեկան մի ջահել։ Թագավորն էլ էղնում է քսան տարեկան։ Կեսն էլ տվեց թագավորի կնկան, էն էլ դառավ քսան ու հինգ տարեկան։

Թագավոր ելավ նստավ իր թախտին, Ավճի Ահմատին էլ ըրեց իրան վաղիր ու ըսավ.— Ավճի Ահմատ, ըստից հ'ետև անունը իմ, թագավորութենը քուկդ էղնի։

Թագավորն իր վազիրների մեկի աղջիկն էլ հ'ուզեց Ավճի Ահմատին։ Յոթն օր, յոթը գիշեր հարսնիք արավ, էն հասավ իր մուրազին, դուք էլ ձեր մուրազին։